ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 7, 1958 Общественные науки

Հ. Ղազարյան

Հ. ՍՎԱՃՅԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Հարություն Սվաճյանը (1831—1874) հայ առաջավոր մտքի պատմության ականավոր ներկայացուցիչներից է։ Նա հրապարակախոս է, պրակտիկ գործիչ, հայ ժողովրդի ազատագրական պայքարին նվիրված անվեհեր զինվոր։

60-ական թվականների արևմտահայ գործիչների ու հրապարակախոսների մեջ դժվար է մատնանշել մեկին, որն իր գրչի ազդեցությամբ, երգիծաբանական տաղանդով, ինչպես նաև գավառում ծավալած ռևոլյուցիոն գործունեությամբ կարողանար հավասարվել անկաշառ ու անվախ, ազնիվ ու ժողովրդանվեր Հարություն Սվաճյանի հետ։ Պատահական չէր, երբ Մ. Նալբանդյանը ժամանեց Պոլիս, արևմտահայ բուրժուական ինտելիգենտներից ամենից վաղ Սվաճյանը հարեց նրան, պաշտպանեց նրա գաղափարները, կանգնեց Նալբանդյանական դիրքերի վրա։ Նալբանդյանի բանտարկության տարիներին, ինչպես նաև նրա մահվանից հետո, արևմտահայ դեմոկրատական ինտելիգենցիային, հատկապես «մեղվական երիտասարդությանը» գաղափարական ուղղություն և գործնական ղեկավարություն էր ցույց տալիս Հ. Սվաճյանը։

Հ. Սվաճյանը միայնակ չէր։ Նա ունեցավ իր համախոհներն ու զինակիցները, որոնք սուլթանական Թուրքիայի ծանր ռեժիմի ներքո, արհամարհելով ամեն տեսակի վտանգը, հաճախ ենթարկվելով հալածանքների, այնուամենայնիվ, ձևակերպեցին հայ ժողովրդի ազատագրման համար մղվող պայքարի գաղափարախոսությունը։

Հ. Սվաճյանը առաջինն էր, որ Մ. Նալբանդյանից ստացավ «Երկու տող» և «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունները, հատվածաբար արտատպեց «Մեղու» պարբերականում և պահպանողականների ու լիբերալների հարձակումներից պաշտպանեց գաղափարական ու պրակտիկ առաջնորդի դրույթները։

Մ. Նալբանդյանը շատ սրտառուչ կերպով արտահայտվեց Սվաճյանի խմբագրած «Մեղու» երկշաբաթաթերթի մասին, այն համարելով «...երիտասարդների և կենդանի ժողովրդի մաքուր բերանը, ազգի ցավերի և ուրախության ճշմարտապես հայտարարը»[1]։

Ուշագրավ են Մ. Մամուրյանի գնահատականները Հ. Սվաճյանի մասին։ Վրույրի բրոնիկներում կարդում ենք. Սվաճյանը «մարդասեր անձ էր, որու հոգին հայերու վշտաց վրա լալու ատեն՝ շրթունքն անոր թերության վրա կծիծաղին, գրիչը մոլություններ կհարվածե և մոլիները տարտարոս կդրկե... ժողովրդյան զավակ և աղետից թարգման, բռնության թշնամի և ազատության անվեհեր ու լուսամիտ կուսակից... Դու կնճռոտ խնդիրներ ես լուծեր, երկշոտ սիր-

[1] Մ. Նալբանդյան. *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. 3, էջ 107։

տերու քաջալեր ես տվեր»[1]։ Ավաճյանի գործունեությունը դրվատող տողեր հրապարակեցին ժամանակի դեմոկրատ մտածողներ Ա. Հայկունին, Գր. Չիլինկիրյանը, «Փարիզ» թերթի խմբագիր Ա. Մուրադյանը և ուրիշներ։ Ընդհակառակը, ռեակցիոն պահպանողականները, նույնիսկ լիբերալ «Մասիսի» խմբագիր Կ. Յութուճյանը, բազմաթիվ հարձակումներ էին կատարում Ավաճյանի ու նրա «Մեղվի» վրա։ «Երևակի» խմբագիր Հ. Զամուռճյանը, Տեյրիմենճյանը («Արևելյան դար» պարբերականի խմբագիր), Խ. Պ. Միսակյանը, կաթոլիկական հերձվածի առաջնորդ Անտոն Հասունյանը կատաղի մարտեր էին մղում Ավաճյանի դեմ, մատնում նրան կառավարությանը, սևացնում նրա գործերը։ «Մեղվի» ծավալած գաղափարական պայքարը այլևս ոչ մի կասկած չի թողնում, որ Ավաճյանը եղել է «սկզբունքի տեր մարդ», հասարակ ժողովրդի շահերի հավատարիմ պաշտպանը։ Սույն հոդվածում մենք կքննարկենք միայն Ավաճյանի աշխարհայացքի էվոլյուցիայի և «Մեղվի» էջերում ծավալած ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության խնդիրները։

* * *

Ընդամենը 25 տարեկան էր Ավաճյանը, երբ Պեշիկթաշի դպրոցում Ն. Ռուսինյանի «Ուղղախոսությունը» դասավանդելու պատճառով հեռացվեց ուսուցչությունից և Օտյանների օգնությամբ ձեռնամուխ եղավ «Մեղու» երկշաբաթաթերթի հրատարակման գործին։ Մի տարի անց, 1857 թ. Կ. Պոլսում սկսվեց «սահմանադրականների» ու «հակասահմանադրականների» կատաղի պայքարը, որը փաստորեն «լուսավորյալ» բուրժուազիայի մարտն էր «խավարյալ» ամիրայության և կղերա-պահպանողականների դեմ։ Հ. Ավաճյանը՝ «Մեղվի» շուրջը համախմբելով «լուսավորյալ «սահմանադրականներին», պրակտիկ պայքարից բացի, սկսեց հրատարակել ֆելիետոնային, կծու սարկազմով գրած իր հոդվածները, դրանով իսկ դարձավ «խավարյալների» վրա սարսափ տարածող անձնավորություն։

Հրապարակախոսը «Մեղվի» հրատարակման առաջին իսկ օրերից իր պաշտպանության տակ առավ հասարակ ժողովրդին, սկսեց մտահոգվել գավառահայության լուսավորության, ինչպես նաև տնտեսական կյանքի բարելավման խնդիրներով։

«Ես ալ որովհետև հրապարակախոս ըլլալու պաշտոն առած եմ վրաս,— գրում էր Ավաճյանը,— ես ճշմարիտ ազգասիրությամբ կսեմ, ուրիշները թող ազգատեցությամբ ըսեն, պիտի ջանամ անկողմնասեր ոգով, ամեն բան դիտելու, ազգային հառաջադիմության և լուսավորության արգելքներն ու անոնք դնողներն համարձակ, այլ ո՛չ անխոհեմությամբ հայտնելու և ըստ իմ կարյաց անոնք վերացնելու ճամբաներն ալ ցուցընելու գործադրությունն ազգին համար հանձնելով»[2]։

Տակավին 1856 թ. Ավաճյանը ձգտում էր դարկ տալ ազգային երկրագործությանը, ստեղծել ապրանքային գյուղատնտեսություն։ Գյուղատնտեսական մթերքները կդառնային այն հիմնական հումքը, որով հնարավորություն կլիներ ընդարձակել ներքին շուկան, զարգացնել ապրանք-դրամական հարաբերու-

[1] Վրույր (Մ. Մամուրյան), Հայկական նամականի, 1872, Զմյուռնիա, էջ 259—260։
[2] «Մեղու», 1856, էջ 78։

թյունները։ Այս հարցում Սվաճյանը որոշակիորեն սահմանազատվում էր «Մեղվի» աշխատակիցներ Գր. Օտյանից և Ն. Ռուսինյանից։ Նրա մտահոգության առարկան ոչ թե խոշոր բուրժուազիան կամ հարուստ վերնախավն էր, այլ աղքատ գյուղացին, քաղաքներում հաց և աշխատանք որոնող, չարքաշ աշխատանքով ապրող օրավարձու մշակները։

«...Մշակը թող ստակ չունենա,— գրում էր Սվաճյանը,— հարուստները կգնեն դրամագլուխ, մշակներն ալ կաշխատին. որով հարուստները իրենք վաստակելեն զատ մեծ բարերություն մը ըրած կըլլան այն խեղճերուն, անոնց, որ իրենց երկրին մեջ հողագործության պարապելով օգուտ մը չկրնան քաղել և պարտավորված են իրենց երկրեն և իրենց ընտանիքեն հեռու բաղդ մը փնտռելու ու անարգ արհեստներ գործելու... աղքատներու հաստատած բարեկարգ ընկերություն մը հարուստներուն իրենց հաշվույն համար բռնած գործեն ավելի շահավոր կըլլա աղքատներուն համար»[1]։ Սվաճյանը պաշտպանում էր աղքատներին, բայց դեռևս այն գիտակցությամբ, որ «հարուստները խիղճ ունեն» և իրենց դրամագլխով «կօգնեն մշակներին»։

Էական մոմենտներից է և այն, որ Սվաճյանի ծրագրերում առաջադրվում է ժողովրդի ոչ միայն լուսավորության պահանջը, որը ընդհանուր էր ժամանակի բուրժուական բոլոր գործիչների համար, այլ նաև նյութական դրության բարելավումը։ «Լեհ գնդապետի նամակ» խորագիրը կրող հոդվածում Սվաճյանը արծարծեց հողային հարցը, երկրագործությունը համարեց ազգի «հիմնական փրկիչը՝ աղքատության» ճիրաններից։ Հատկանշականն այն էր, որ նման հարցադրումը առաջին անգամ էր երևում հայ մամուլի էջերում։ Սվաճյանն ինքը գուցե բոլորովին էլ չէր գիտակցում, թե քիչ հետո այս հարցը դառնալու է ռևոլյուցիոն դեմոկրատիզմի հիմնական պահանջը։ Այդ երևում էր նրանից, որ վերոհիշյալ կարևոր հարցադրումից հետո, հարցի լուծման ուղիները որոնելիս Սվաճյանը ընկնում էր ուտոպիայի մեջ, անմիջապես դրսևորում այդ շրջանի իր հայացքների չափավորությունը։

Սվաճյանը պայքարում էր նաև արևմտահայության քաղաքական իրավունքների պաշտպանության նշանաբանով։ Նա խրախուսում էր էսնաֆների պայքարը ընդդեմ պոլսահայ ամիրայության և սահմանադրության հրապարակումից մեկ տարի առաջ, 1859 թ. հայտարարում էր. «...ազգ մը ամենայն իրավամբ կարող է իշխաններուն իրանց պաշտոնին մեջ խարդախությունը, անհավատարմությունը և անիրավությունը տեսած ատեն, զանոնք դատապարտելու և նախատելու. անոր ընծայած հարգանաց փոխանակ, ետքն ալ անարգելու. վերջապես իրավունք ունի զինքը թշվառացնելու նպատակով իշխողը վանելու, հալածելու և ամեն կերպով զանի թշվառ ընելու...»[2]։

Բարձր դասելով սահմանադրությունը, Սվաճյանը սահմանադրական շենքը ձգտում էր կառուցել ոչ թե արհեստավորների նեղ դասային տեսանկյունով, այլ նրան կամենում էր մասնակից դարձնել լայն ժողովրդական մասսաներին, գավառահայ գյուղացիությանը, բանվորներին, մտավորական մասսաներին[3]։ Նա սահմանադրական շարժումը օգտագործեց ժողովրդին քաղաքական պայ-

---

[1] «Մեղու», 1856, էջ 66—67։

[2] «Մեղու», 1859, էջ 34։

[3] Ա. Գ. Հովհաննիսյան. Նալբանդյանը և նրա ժամանակը, Երևան, 1955, հատ. 1, էջ 405։

քարի նախապատրաստելու համար և հետագայում՝ չբավարարվելով կամ դուրս գալով սահմանադրական պատրանքների մշուշից, առաջադրեց ժողովրդի զինված պայքարի մեթոդը։

Ժողովրդական մասսաների լուսավորություն, տնտեսական գրության բարելավում, երկրագործության և վաճառականության զարգացում, ամիրայության իրավունքների սահմանափակման գնով ժողովրդի քաղաքական իրավունքների ընդլայնում, աշխարհաբար լեզվի մշակում և մասսայականացում,— ահա հարցեր, որոնք ակունք ծառայեցին Սվաճյանի հետագա գործունեությանը և հիմք դարձան «նալբանդյանական» ուղիով ընթանալուն։

Չպետք է անտեսել և այն, որ վերոհիշյալ հարցերի լուծման մեթոդների առաջադրման խնդրում անմիջապես երևում էր 50-ական թվականների «Մեղվի» պահանջների չափավորությունը։ Այդ շրջանում «Մեղվի» էջերում բացակայում էր հայ ժողովրդի քաղաքական պայքարի գաղափարախոսությունը, մի բան, որը ճնշված ազգության ներկայացուցիչ բուրժուական դեմոկրատի հիմնական պահանջներից մեկն էր։

Գրիգոր Օտյանի և Նահապետ Ռուսինյանի՝ ապագա անվանի լիբերալների, գործակցությունը «Մեղու» շաբաթաթերթին, բնական է, որ պետք է լիբերալիզմի կնիքը դներ «Մեղվի» ընդհանուր ուղղության վրա։ Հայտնի է, որ «Մեղվի» աշխատակիցներ են եղել Գրիգոր Օտյանը, Նահապետ Ռուսինյանը և Ն. Պալյանը։ Հովհաննես Մկրյանը ժամանակին որոշ հոդվածների տակ թանաքով դրել է աշխատակիցների անունները, հատկապես «Գ. Ս. Օ.» տառերով ստորագրող Գ. Օտյանի անունը։ Հրանտ Ասատուրը ևս վկայում է, թե «Օտյանը թերթը («Մեղուն» — Հ. Ղ.) քիչմ ալ իրենը կհամարեր»։ Այնուամենայնիվ, «Մեղվի» էջերում տպված բոլոր հոդվածները չէ, որ Սվաճյանի գրչին են պատկանում։

Առաջին երկու տարում «Մեղուն» հրատարակվում էր «ուղղախոսության» լեզվով, որի պատճառով էլ ոճից դժվար էր որոշել, թե այս կամ այն հոդվածը ումն է պատկանում։ Ի դեպ, քիչ չեն այն հոդվածները, որոնց տակ ոչ մի ստորագրություն չի դրված։ 1857—1861 թթ. «Մեղվի» էջերում տպագրված՝ արևմտահայերի «Ազգային սահմանադրությանը» նվիրված և բարձր լեզվական կուլտուրայով գրված բազմաթիվ հոդվածները Սվաճյանին չէին կարող պատկանել։ Ոճից և լեզվից ակնհայտ է, որ դրանց հեղինակները պետք է լինեին Գրիգոր Օտյանը, Ն. Ռուսինյանը, իսկ որոշ հոդվածների հեղինակը՝ Ն. Պալյանը։

Չպետք է մոռանալ նաև այն, որ Սվաճյանը այդ էտապում դեռևս ապրում էր իր հայացքների խմորումների շրջանը։ Ազգային բուրժուազիան արևմտահայերի կուլտուրական զարթոնքի տվյալ շրջանում դնում էր ժողովրդի կրթության, լուսավորության պահանջները, որոնք ժամանակի իմաստով պրոգրեսիվ էին և համընկնում էին ժողովրդական մասսաների որոշակի ձգտումների հետ։ Բնական է, որ իր գործունեության վաղ շրջանում, երբ Սվաճյանի հայացքները դեռևս ռևոլյուցիոն լիցք չէին ստացել, նրան չէին կարող խորթ լինել վերոհիշյալ պահանջները։ Ահա դրանով կարելի է բացատրել այն, որ արևմտահայ դեմոկրատիայի տրիբունը 1860 թ. գրում էր հետևյալ տողերը. «Բարեբաստի՞կ ազգ. ինչ որ ուրիշ ազգեր մեծամեծ արյունհեղությամբ հազիվ կրցան ձեռք բերել այսօր դուն ամենայն խաղաղությամբ և սիրով ստացար, աշխարհիս էն մեծ և լուսավորյալ ազգերուն ազգային ընդհանուր ժողովոց նման ժողով գումարեցիր և քու սրահի դուռը սպասելու ազգային պահապան զորքերդ, քու ժողովականացդ սերն եղավ, որ դուրս նետեց ստելությունն ու խռովությանց

առիթները... Աշխարհը թող զարմանա, երբ օր մը քու տարեգրությանց այս բերկրառիթ գլուխը կարդալով տեսնե, թե ի՞նչ մեծ գործ մը, ի՞նչ մեծ դյուրությամբ ի գլուխ եկած է, ու զմայլի Հայ ազգի խաղաղասեր բնավորության վրա... Ով դուք, կարոտյալք ազգին ծերք և տղայք, աղքատք ու հարստահարյալք, ցնծացեք ու ուրախ եղեք»[1]։

Պայքարի այս էտապում դասակարգերի հաշտեցման ձգտումներով տոգորված Սվաճյանը «Կուսակցության ոգին» համարում էր «աշխարհը տակնուվրա ընող և անոր խաղաղությունը վրդովող մեծ մոլորություններեն մեկը»։ «Կուսակցության ոգին,— գրում էր «Մեղուն»,— այդ ժամանակներս ազգը այսպես մաս-մաս բաժնելեն ետև, դեռ գոհ եղած չէ, այլ կչանա միշտ ալ ավելի դասերու պառակտել... կճանչենք կուսակցության ոգվոյն չարությունը, կտեսնենք անոր հասուցած վիշտերն ու վնասները... Մեղուն կուսակցության ոգվույն դժոխային սահմանները ոտք չկոխեր և զանի ալ իր սահմանը չընդուներ»։

1850-ական թվականներին «Մեղուն», ձայնակցելով լիբերալ «Մասիսի» ընդդեմ ֆրանսիական ռևոլյուցիայի վետերան Ստեփան Ոսկանյանի գրված հոդվածաշարին, զետեղում էր ֆելիետոն վերջինիս ծաղրանկարով։

«Մեղվի» հրապարակած նման բնույթի հոդվածներից պարզ է, որ պարբերականը իր վրա կրել է չափավոր լիբերալիզմի կնիքը։ Սվաճյանի հոդվածներում տեղ գտած դեմոկրատիզմը ազգային շրջանակներից դուրս չի եկել։ Բավական է հիշատակել, որ առաջին շրջանի «Մեղվի» էջերում, հայերից բացի, ոչ մի ժողովրդի մասին խոսք չկա, այն դեպքում, երբ 1860-ական թվականներին Սվաճյանին մտահոգում էր քրդերի, իտալացիների, լեհերի պատմական բախտը։

Ռ. Գասպարյանը, անտեսելով Սվաճյանի աշխարհայացքի ստվերոտ կողմերը, ձգտել է ապացուցել, որ նա այս շրջանում եղել է հետևողական դեմոկրատ, բուրժուական-դեմոկրատ, «լուսավորիչ-դեմոկրատ», «լուսավորական դեմոկրատ»[2]։

Գասպարյանը շփոթել է։ Սվաճյանը «լուսավորյալների» պարագլուխներից էր, բայց ոչ լուսավորիչ-դեմոկրատ։ Այլ է «լուսավորյալը», այլ է «լուսավորիչը»։ «Լուսավորյալներ» կոչվեցին արևմտահայ բուրժուական այն ինտելիգենտները, որոնք, ի հակադրություն «խավարյալ» գրաբարամոլների, պաշտպանեցին աշխարհաբար լեզուն և աշխարհիկ գրականությունը։ Այդ շարժման բոլոր մասնակիցները չէ՛, որ լուսավորիչներ էին։

Վ. Ի. Լենինի կողմից բուրժուական լուսավորիչ գնահատականի են արժանացել ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատները, հատկապես Ն. Գ. Չերնիշևսկին։ «Ո՞ր ժառանգությունից ենք մենք հրաժարվում» հոդվածում Վ. Ի. Լենինը նշում է բուրժուական լուսավորիչի հետևյալ երեք հատկանիշները. ա) «կրքոտ թշնամություն» ֆեոդալական հասարակության բոլոր ինստիտուտների նկատմամբ, բ) «կյանքի եվրոպական ձևերի պաշտպանություն», գ) «...գյուղացիների (որոնք դեռևս լիովին ազատագրված չէին կամ նոր միայն ազատագրվում էին լուսավորիչների դարաշրջանում) շահերի պաշտպանությունն է, անկեղծ հավատ, թե

---

[1] «Մեղու», 1860, № 108, էջ 188—189։

[2] Տե՛ս Ռ. Գասպարյան, Նալբանդյանի ազդեցությունը արևմտահայ հասարակական-քաղաքական մտքի վրա, «Սովետական գրականություն», 1955, № 4, էջ 110։

ճորտատիրական իրավունքի և նրա մնացորդների վերացումն իր հետ ընդհանուր բարեկեցություն կբերի, և դրան օժանդակելու անկեղծ ցանկությունը»[1]։

Սվաճյանի 1850-ական թվականների գրական և հրապարակախոսական ժառանգությունը թույլ չի տալիս նրան անվանել դեմոկրատ-լուսավորիչ կամ բուրժուական լուսավորիչ այդ հասկացողությունների լենինյան իմաստով։

Ընդհակառակը, Սվաճյանը կրքոտ ատելությամբ էր լցված դեպի այն մարդիկ, որոնք կողմնակից էին արևմտահայ կյանքի «եվրոպականացմանը»։ «Մեղվի» էջերում գյուղացիներին ազատագրելու, հողով բավարարելու պահանջ չի առաջադրվում, չկա ատելություն «ֆեոդալական բոլոր ինստիտուտների» նկատմամբ։ Բոլորովին այլ էր Սվաճյանը 60-ական թվականների իր հայացքներով ու պրակտիկ գործունեությամբ։

1860—1861 թթ. ինչպես մի շարք այլ գործիչների ու հրապարակախոսների, այնպես էլ Հ. Սվաճյանի հայացքներում որոշակիորեն շրջադարձ է կատարվում։ Այդ շրջադարձի գործում անշուշտ խոշոր դեր է կատարել Մ. Նալբանդյանը, բայց նաև չպետք է մոռանալ «սահմանադրական» շարժման, գավառից եկող բողոքների ազդեցության, Զեյթունում սկսած ազատագրական կռիվների նշանակությունը Սվաճյանի աշխարհայացքի հասունացման պրոցեսում։ Սուլթանական Ռ. Դուռը իր ռեպրեսիաներով «սահմանադրության» ամլացմամբ, մամուլի և մասնավորապես «Մեղվի» նկատմամբ հարուցած արգելքներով սաստիկ ջուր լցրեց Հ. Սվաճյանի բարեհոգության վրա։

Ահա այս ներքին ու արտաքին պատճառներից ելնելով՝ 1860 թ. հուլիսի 10-ին «Մեղուն», բացահայտելով եվրոպական դիվանագիտության խարդախ ու «ժողովրդատյաց» էությունը, անցյալում ունեցած համերաշխության քարոզների փոխարեն այժմ հրապարակով հայտարարում է. «Այս ազգը (հայերը — Հ. Ղ.) բե իր մեջեն բե դուրսեն շատ մարդիկ իրեն բշնամի ունեցավ վասնզի զմարդիկ և զմարդկությունն շատ սիրեց այս ազգը (ընդգծումը մերն է — Հ. Ղ.), զանոնք իր մեջ ընդունեցավ, իր ամեն բարեսրտություն անոնց հայտնեց. որպեսզի ասոնք դառնան ու դինք խայթեն»[2]։

Այսպիսով «Մեղուն» իր քննադատական խոսքն ուղղում է եվրոպական խարդախ դիվանագետների, կաթոլիկ գործիչների հասցեին, որոնք «հայերի փրկության» լոզունգով հոգ էին նախապատրաստում իրենց քաղաքական էքսպանսիայի համար։

«Ասոնց դեմ, ասոնց անդթությանց դեմ,— գրում էր «Մեղուն»,— բողոքած ատեն, ելան ու աշխարհի մեկ ծայրեն մյուսը հասուցին իրենց աղաղակներուն ձայնը ու ուզեցին, որ զմարդկությունն ամբողջ հրավիրեն այս ազգին վրա ու զարնել կործանել տան այս տունը, որ ետքեն անոր փլատակներովը նոր տուներ կանգնեն իրենց համար... Ահա մեր ըսելիքը Եվրոպային, ահա, ինչ որ մինչև հիմա չկրցանք ըսել և տակավին ըսելու չենք փութար»[3]։

Նույն տարվա օգոստոսի 20-ին Սվաճյանը «Հյուսիսափայլից» արտատպում է Կոմս Էմմանուելի «Մանկության օրեր» և այլ բանաստեղծություններ։

Դեռևս 1858 թ. Հ. Սվաճյանը, «Հյուսիսափայլի» էջերից ծանոթ էր Մ. Նալ-

---

[1] Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 2, էջ 652—653։

[2] «Մեղուն», 1860, № 103, էջ 152։

[3] Նույն տեղում, էջ 152։

բանդյանի հոդվածներին։ Նա արտատպում էր այդ հոդվածները, սակայն առանց ծանոթագրությունների։ 1860 թ. երկրորդ կեսից Հ. Սվաճյանը, «Հյուսիսափայլից» արտատպելով որոշ հոդվածներ, նրանց կցում է ուշագրավ մեկնաբանություններ։ Արտատպելով Ստ. Նազարյանցի «Հայոց ազգի լուսավորության կամ սուրբ թարգմանիչների դարը» խորագիրը կրող հոդվածը, Սվաճյանը ավելացնում է. «Այս գեղեցիկ և հմտալից հոդվածը հրատարակելուս հետ պարտք կը համարենք նաև ծանուցել ասոր մեջի ամեն կարծիքներ միօրինակ չենք պաշտեր հեղինակին հետ»[1]։ Այստեղից պարզ է, որ նախքան Նալբանդյանի հետ անձնական ծանոթություն ստեղծելը, Սվաճյանը քաղաքականապես հասունացած անձնավորություն էր։ Լիբերալ Նազարյանին քննադատելով, նա մեծ ակնածանքով էր խոսում Նալբանդյանի մասին։

1860 թ. մայիսից «Մեղուն» սկսում է տպագրել Կոմս Էմմանուելի «Հիշատակարանը» հենց իրեն Նալբանդյանից վերցրած հետևյալ բնաբանով. «Ազգության հաստարանը և լծակը է հասարակ ժողովուրդը։ Մի ազգ, թո՛ղ որքան կամի, հարուստ լինի երևելի մարգերով, այնուամենայնիվ այդ ազգի ազգության մեքենան շարժվում է հասարակ ժողովրդի վերա, սա է այդ մեքենայի առանցքը, լծակը և հաստարանը»[2]։

Սվաճյանը, արդեն հասարակ ժողովրդի շահերի պաշտպանությամբ, բողոքում էր տիրող գրաքննչական կանոնների դեմ, կատարյալ ազատություն պահանջելով խմբագիրների անկաշկանդ գործունեության համար։

1860 թ. հոկտեմբերին Պոլսի պատրիարքարան են հրավիրում հայ հրապարակախոսներին և ստորագրություն վերցնում՝ պատրիարքի, կառավարության և իրար դեմ «թշնամացնող» հոդվածներ չտպագրելու համար։ Սվաճյանը չներկայացավ պատրիարքարան։ Այդ բնական էր, քանի որ «Մեղվի» երգիծաբանական հոդվածների հեղինակը չպիտի կարողանար այդ պահանջը կատարել։ Ահա այս առիթով՝ քննադատելով կղերա-պահպանողական գործիչներին, «Մեղուն» առաջավոր ինտելիգենցիային դիմեց հետևյալ պահանջներով. «Տպագրությունը, հասարակաց բարվույն համար իր ազատությունը գործադրած ատեն, ոմանց ատելի երևնալը ոչինչ պիտի համարի, անոնց ծածկել ուզած դեպքերն ու եղելությունները ինք ալ չպիտի ծածկէ երբեք, հասարակաց խաղաղությունը չվրդովելու անխելք խոհեմությամբ...»։ Տպագրությունը այսօր պետք է որ ամեն ճիգը բափե, ամեն վնաս, վտանգ, զոհ աչքը առնե ու պատերազմի, իր պարտությանը մեջ մեռնի նե ալ՝ իր պաշտպանած ճշմարտությունը օր մը պիտի պաշարվի»[3] (ընդգծումը մերն է—Հ. Ղ.)։ Խմբագրի համար գրելու ազատությունը այն նվիրական զգացումն էր, որը նրան պիտի հնարավորություն տար պայքարելու ճշմարտությունը պաշտպանելու համար։ «Հրատարակիչը այս աշխարհեն չպիտի ճանչե ինքնզինքը,— շարունակում էր «Մեղուն»,—այլ ազատ աշխարհին հրեշտակը պիտի ըլլա, քարոզող այն ճշմարտությունը, որ այս աշխարհս ալ ազատ պիտի ընե։ Հրատարակիչը... Աստծմեն ետք իր ազատությունը պիտի պաշտե և անոնք որ տպագրության ազատության թշնամին են մարդկային սեռին ալ թշնամին են»[4]։

---

[1] «Մեղուն», 1860, № 86։

[2] Նույն տեղում, № 101, էջ 130։

[3] Նույն տեղում, 1860, 20 հոկտեմբերի. № 113, էջ 225։

[4] Նույն տեղում, էջ 226։

Հ. Սվաճյանի շրջադարձի գործում էական դեր են խաղացել նաև իտալական ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները, հատկապես «գարիբալդիական» հազարյակի անօրինակ սխրագործությունները։

1840—1850-ական թվականներին իտալական ժողովուրդը հերոսական պայքար էր մղում Ավստրիայի մետերնիխյան ռեժիմի դեմ։ Իտալական ազգային-ազատագրական շարժումները բաժանվում էին տարբեր խմբավորումների։ Միապետականների գլուխն էր կանգնած Վատիկանը՝ Հռոմի պապի ղեկավարությամբ։ Խոշոր բուրժուազիայի շահերն էին արտահայտում Սարդինիայի ու Պիեմոնտի թագավոր Վիկտոր Էմմանուել III-ը և ապագա պրեմիեր-մինիստր Կավուրը։

Բազմամիլիոն գյուղացիության և ընդհանրապես աշխատավորական մասսաների շահերի արտահայտիչներն էին «Երիտասարդ Իտալիա» կազմակերպության ղեկավարները՝ Ջ. Մաձինին և ամերիկյան ազատագրական շարժման վետերան Ջուզեպպե Գարիբալդին։

Իտալացիների մղած ազատագրական պայքարը լայն արձագանք էր գտնում արևմտահայերի պարբերական մամուլում։ Հայ հասարակական հոսանքներից յուրաքանչյուրը, իր ետևում կանգնած դասակարգի շահերից ելնելով, որոշակի վերաբերմունք էր ցուցաբերում այդ շարժման մասնակիցներին։ Արևմտահայ պահպանողականները, նրանց պարագլուխ Զամուռճյանը, սև գույներով էին նկարագրում գարիբալդիական հազարյակի գործունեությունը և գովաբանում Հռոմի պապի ու Վատիկանի գործակալների ձգտումները՝ Իտալիայում միապետություն ստեղծելու մասին։ Լիբերալ մտավորականները, «Մասիսը» և նրա շուրջը խմբված կոմպրադորական բուրժուազիայի իդեոլոգները գովեստով էին խոսում Կավուրի և Վիկտոր Էմմանուել III-ի մասին։

Արևմտահայ դեմոկրատական ինտելիգենցիան, հատկապես նրա ղեկավարներից Հ. Սվաճյանը հարեց «գարիբալդիական» շարժմանը՝ նրան նվիրելով բազմաթիվ ու սրտառուչ տողեր։

1860 թ. նոյեմբերի 20-ին «Մեղուն» տպագրում է «Կարիպալտի» վերնագրով մի հոդված, որտեղ Հ. Սվաճյանը համակրություն է հայտնում իտալական ազատագրական շարժման ռևոլյուցիոն-դեմոկրատական ուղղության ղեկավարին՝ Ջուզեպպե Գարիբալդիին։ Գարիբալդին 1860 թ. ճակատամարտերից մեկում վիրավորվեց և հրապարակից հեռացավ։ Բուրժուազիան նրան պատվավոր աքսոր ուղարկեց։ Համանուն առիթով «Մեղուն» գրում էր.

«Ատենե մը իվեր անուն մը կը հեղեղե ամեն բերան, և աշխարհ ափ ի բերան կը նայի այն անվան տիրոջն ետևեն. զարմանքով կը դիտե անոր ամեն մեկ շարժվածքը, գմայլանքով ականջ կը դնե անոր ամեն մեկ խօսքերուն և սքանչանալով կը պատմե անոր անշահախնդիր առանձնությունը...։ Այս անձը առաքյալն Աստուծո, կուգա մարդկության բարերար ըլլալու և գերի ու ստրուկ ժողովուրդներու իրենց ազատությունը ստացնելով՝ կրճաշվի կառանձնանա...։ Կարիպալտի Իտալիան ազատեց. Կարիպալտի փոխարինություն մը չընդունեց։ Ահա այս երկու հատկություններն են, որ աշխարհիս սերն անոր վրա քաշեցին և այսօր առհասարակ ամեն մարդ ավելի ակնածությամբ անոր անունն ի բերան կառնե քան թե աշխարհիս են մեծ կայսերաց անունը։

Տա՜ր երկինք, որ ամեն ընկեյալ ազգերու համար ալ այսպիսի անձինք հառնին և աշխարհիս խաղաղությունը հաստատ հիմանց վրա դրվեր։ Կարիպալտի նոր ժամանակիս դյուցազունը, նոր սերունդին սիրտը բնդացուց և նո-

ra հասակը մեղուն նախանձեցավ անոր և անոր փրկյալներուն բաղդին վրա»[1] (ընդգծումը մերն է — Հ. Ղ.)։

«Մեղվի» այս հոդվածը տպագրվեց այն օրը — 1860 թ. նոյեմբերի 20-ին, երբ Հնդկաստան ուղևորվելիս Պոլիս ժամանեց և այստեղ մեկ ամիս կանգ առավ հայ ռևոլյուցիոն-դեմոկրատական շարժման ղեկավար Մ. Նալբանդյանը։

Նալբանդյանի հետ ինչպես Հ. Սվաճյանի, այնպես էլ արևմտահայ պրոգրեսիվ մտավորականության ծանոթությունը խոշոր նշանակություն ունեցավ վերջիններիս հայացքների ձևավորման գործում։

Պոլսում Սվաճյանը սրտառուչ վերաբերմունք ցուցաբերեց «արգո հայրենակցին, պարոն Նալբանդյանցին» և, դիմելով արևելահայ և արևմտահայ ինտելիգենցիային, պատգամեց բարոյապես միանալու, միասնաբար պայքարելու ոչ միայն «խավարի բարեկամների», այլև «բռնության» և «հարստահարողների դեմ»։

Նալբանդյանի գալուց հետո՝ մի ամիս շարունակ «Մեղվի» էջերը լիքն էին Նալբանդյանց, Շահբեկ և այլ ստորագրություններ կրող հոդվածներով, որոնք խարազանում էին Զամուռճյանի, Վանցի Պողոս վարդապետի և այլ «խավարամոլների» ազգադավ գործերը։ Նալբանդյանը և Սվաճյանը[2] դաշինք էին կապել ռեակցիոն պահպանողականների դեմ մղվող պայքարում։

1860 թ. դեկտեմբերի 31-ին, Նալբանդյանի Պոլսից մեկնելուց տասս օր հետո, «Մեղուն» տպագրեց «Չորս տարին մեկ օր» խորագիրը կրող հոդվածը, որտեղ իր ողջ գործունեությունը համարեց մեկ օրում անցած ճանապարհ։ «Մեղուն ահա այսօր չորս տարին լմնցուց,— գրում է Սվաճյանը,—բայց իր աչքին այս չորս տարին մեկ օր կերևա. վասնզի անցածը միշտ վայրկյան մըն է, ներկան երկու վայրկյան, ապագան է որ անսահման։ Մեղուն կհամարե իր կենաց չորս տարին մեկ օր. վասնզի հազիվ մեկ օրվան մեջ գործվելուն չափ գործ գործեց և ծառայություն ըրավ ազգին»[3]։

Սվաճյանի շրջադարձի ինչպես նաև Մ. Նալբանդյանի հետ սերտ զինակցություն կնքելու մասին է վկայում 1860 թ. դեկտեմբերին Նեապոլից Նալբանդյանի ուղարկած նամակի բովանդակությունը։ Այս նամակը Սվաճյանը ստացել էր 1861 թ. հունվարի 11-ին, սակայն չէր հրատարակել մինչև 1871 թ.։

Նամակում Նալբանդյանը նկարագրում էր իտալական ժողովրդի պայքարը Ավստրիայի տիրապետության դեմ, բացահայտում Նեապոլում, Մեսսինայում և ողջ Իտալիայում ծավալված ազատագրական շարժման մասնակիցների դասակարգային կազմը և ձգտումները։

«Նեապոլսի մեջ,— գրում էր Նալբանդյանը Սվաճյանին.— համարյա թե նույն չափով կան այն երեք միմյանցից տարբեր հասկացողություններ, որքան Մեսսինայի մեջ և երևում է, որ այս ընդհանուր է ամբողջ Իտալիային, հասարակ ժողովուրդը՝ Գառիբալդյան, Միջնակարգը՝ Վ. Էմմանուելյան, իսկ աղնվականք՝ թշվառ ետընթացք։

Կեցցե՞ Իտալիա, կեցցե՞ Գառիբալդի, անլուռ աղաղակում է հասարակ ժողովուրդը... Ահա այսքան լուր միայն Իտալիո մասին կարող եմ գրել առայժմ։

---

[1] «Մեղու», 1860, № 116, էջ 250—251։

[2] Մ. Նալբանդյանի և Հ. Սվաճյանի փոխհարաբերությունների մասին մանրամասն տե՛ս Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հատ. 1, էջ 495 և հետ.։

[3] «Մեղու», 1860, 31 դեկտեմբերի, № 120, էջ 281։

Չեմ նախանձում Իտալիայի ազատության, դորա հակառակ առ ի սրտե ուրախ եմ, սակայն տեսանելով նորա ազատությունը, իմ ազգի տկարությունը կրծում է սիրտս և այրում է հոգիս... Էտնան և Վեզուվն ծխվում են. Արարատի հին վուլկանի մեջ մի՞թե կրակ կմնա խպառ... մահաբեր մտածություն։ Ողջունիր իմ կողմից, որոնց կուրծքի մեջ զարկում է ստուգապես հայկական սիրտ կեղևով հայ-մարդերից «հրաժարելով հրաժարիմ»[1]։

Արդեն ռևոլյուցիոն-դեմոկրատական պլատֆորմի վրա կանգնած Մ. Նալբանդյանի այս տողերի հղումը Սվաճյանին պատահական չէր։ Հանձինս Սվաճյանի Նալբանդյանը արևմտահայ պրոգրեսիվ ինտելիգենցիայի մեջ տեսնում էր հայ ազատագրական շարժման մարտական ղեկավարներից մեկին, գավառի շահերի լավագույն պաշտպանին։ Հրապարակախոսը արդեն որոշակիորեն շրջվում է դեպի գավառ և նկարագրում գավառահայ աշխատավորության կրած զրկանքներն ու տառապանքները։

«Տեսավ գավառական հայոց իրենց իշխան կարգված հարուստներուն ձեռքով կրած նեղությունները և տերության պահանջածեն ավելի հարկ վճարելը նույն իշխաններուն քակն ուցնելուն համար,— գրում էր «Մեղուն»։— Տեսավ ամենայն բեռ, ամենայն ցավ, ամենայն թշվառություն ժողովրդին վերա ծանրացած, և ամենայն լավություն, ամենայն թեթևություն և ամենայն բարօրություն ժողովրդին երակներեն քամված արյունովը դիրացող հարուստներուն վրա հանգչած»[2]։

1860 թ. վերջերից, հատկապես 1861 թ. Սվաճյանի հրապարակախոսությունը կապվում էր արևմտահայ իրականության մեջ կատարվող քաղաքական անցքերի հետ։

*Ավելի ճիշտ՝ ամեն մի կարևոր իրադարձություն, որն առնչվում էր հայ ժողովրդի սոցիալական ու քաղաքական ազատագրության հետ, իր արտահայտությունն էր գտնում դեմոկրատական շարժման առաջատար թերթի՝ «Մեղվի» էջերում։ Սվաճյանի հրապարակախոսության արժանիքն էլ միայն նրա գեղարվեստական կողմը չէր, այլ այն պարզ հոդվածները, որոնք կոչի ձևով հրամցրվում էին «սիրելի հայրենակիցներին», գավառահայ գյուղացիությանը։ Սվաճյանը ժամանակին արձագանքում էր ամեն մի ապստամբության, ցույցի, ժողովրդական եռույթի, եթե դրանք ուղղված էին սուլթանական կառավարության և վաշխառուն քուրդ ասպատակող վերնախավի դեմ։ 1861 թ. մարտի 20-ին «Մեղուն» տպագրեց «Ազգային պարտք» խորագրով մարտաշունչ հոդվածը, որտեղ կոչ էր արվում՝ կռվել ու մեռնել ներքին և արտաքին թշնամիների դեմ մղվող «սուրբ պատերազմում»։ Հոդվածը տպագրվեց ճիշտ այն օրերին, երբ ազգային ժողովը «Մարաշից գիրեր առավ, թե Զեյթունի հայք զինյոք դիմադրություն են ըրեր, թուրքական զորաց»։ Հ. Սվաճյանը ազգային ժողովի դեպուտատ էր, և անհավանական չէ, որ այս հոդվածը գրվեր Զեյթունի 1861 թ. ապստամբական դեպքերի ազդեցությամբ։ «...*Բայց հիմա ազգը շատ թշնամի ունի,— *գրում է «Մեղուն»,—* ներքին թշնամի և արտաքին թշնամի. թշնամիք առաջադիմության և լուսավորության, թշնամիներ, որոնք առեր են ազգին մեջ պաշտոն, ազդեցություն և շահ ունեին ու հիմա ունենալ չկրնալով, ուխտ ըրած

---

[1] Մ. Նալբանդյան, *Ընտիր երկեր*, 1953, էջ 619։

[2] «Մեղու», 1861, 20 մարտի, № 128, էջ 66։

են ամեն բանի տնօրենություն... ամեն ազգային առաջադիմության նպաստող որոշում եղծելու, կործանելու ու բնաջինջ ընելու և անոնց տեղ իրենց կամքը, կարծիքը, հավատքը և շահը թաղավորցնելու... Վերջապես թշնամիք, որոնց ոխը ազգին կործանմանը ատեն միայն պիտի կրնա մարիլ»[1] (ընդգծումը մերն է — Հ. Ղ.)։

Հ. Սվաճյանը ներքին դասակարգային թշնամուց սոսկալի, միաժամանակ «կարի զորավոր էր» համարում «դրսի թշնամիներին, սուլթանական և ցարական» կառավարություններին։

«Դուրսեն թշնամիներ կան. թշնամիք, որ անգթաբար կանխայեն,— գրում էր Սվաճյանը,— հինօրյա բարեպաշտ ազգի մը, իրենց տերությունը զորացնելու համար. թշնամիք, որ հեռատեսելով, թե հայ ազգը իր գերության շղթաները քիչ մը թուլցած ատեն, լուսավորության շավղին մեջ քաղաքակրթյալ ազգաց կարի օգտակար ժողովուրդ մը կրնա ըլլալ և թե անով կրնան ամեն կողմ մեծ ազդեցություն ունենալ ու իրենց նպատակին հասնել բևեռներեն կվազեն կուգան և խորամանկ, քան ներքին թշնամիները, իրենց մատուցած լեղի բաժակին բերանը անուշեղեն կքսեն, թշնամիք, որ այսօր պատրաստ կցուցնեն ինքնպինքնին ամեն արտոնություն շնորհելու հայ ազգին, վաղը զանի կլնելու համար. այսօր նյութական բարօրության մեջ կխեղդեն ինքը՝ վաղը անոր բարոյական բարօրությունը հափշտակելու համար»[2]։

Իրավացի է Ա. Հովհաննիսյանը նշելով. «Երբ Սվաճյանն ակնարկում էր այն մասին, թե ազգի արտաքին թշնամիները «իրենց մատուցած լեղի բաժակի բերանը անուշեղեն կքսեն», ապա նա նկատի ուներ ոչ միայն սուլթանի «շնորհած» Ազգային սահմանադրությունը, այլև, հավանորեն, նաև ցարի մանիֆեստով ազդարարված Ձորտերի ազատագրումը»[3]։

Սվաճյանը չէր բավարարվում վերևից տրված ռեֆորմներով։ Նա ոտքի էր հանում դավառահայությանը և փորձում զինված պայքարի միջոցով լուծելու քաղաքական ազատագրության խնդիրները։ Այդ մարտերում զոհված հերոսները, իրենց մահով փառավոր էջեր կգրեին մարդկության պատմության մեջ։ «Եթե այս սուրբ պատերազմին մեջ ըլլինք՝ ազգին ամենամաքուր նահատակները պիտի ըլլանք,— գրում էր «Մեղուն»,— և բոլ ազգն ալ մեր մահվանեն ետև, մեր աչքերը զոցվելեն ետև զոհվի ուրիշին։ Իսկ երբ հաղթող ելնենք, երանի՝ այն անձերուն, որ ազգի մը ազատարարն ըլլալու փառքին պիտի արժանանան. ազատարարներ, որ զորավոր տերության դեմ մարտնչելով խլեն, առնեն պիտի — անոնց ձեռքեն ազգը — չափազանցություն չկարծվի մեր ըսածները» (ընդգծումը մերն է — Հ. Ղ.)։

1861 թ. մարտին Զեյթունից ստացված բողոքագրերը քննարկվեցին Ազգային քաղաքական ժողովում։ Անարդյունավետ այդ քննարկումից հետո կազմվեց դիմում, և պատրիարքը անձամբ Բ. Դուռ գնաց խնդրելու՝ «դադարեցնել արյունահեղությունը Մարաշում»։ Սվաճյանը պայքարի այդ մեթոդին դեմ էր։ «Ազգային պարտքի վճարումը» վերնագրված առաջնորդողում «Մեղուն» փրկության միջոցը համարում էր կազմակերպված զինված պայքարը և շարունակում

[1] «Մեղու», 1861, 20 մարտի, № 128, էջ 66։
[2] Նույն տեղում։
[3] Ա. Ի. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հատ. 1, էջ 496։
[4] «Մեղու», 1861, 20 մարտի, № 128, էջ 66—67։

«Երանի այն հայերուն, որոնցմով Ազգին ապագա սերունդը պիտի պարծի և որոնց օրինակին հետևելու համար նախանձ մը պիտի ունենա իր ներսը, և այն նախանձով մեզնե ավելի մեծ գործեր պիտի ընե Ազգին համար»[1]։

«Մեղվի» այս հոդվածների, ինչպես նաև 1861 թ. օգոստոսին Պոլսում բռնկված «սահմանադրական» ցույցերի պատրվակով Բ. Դուռը փակեց պարբերականը։ 1861 թ. հոկտեմբերի 31-ի առաջնորդողում կարդում ենք. «Երկու ամիս խափանված մնալե ետև Մեղուն այսօր նորեն երևան կելնե բարձրագույն հրամանով,— ավելացնելով, որ ճշմարիտ ազգասերը «փորորիկեն ետմ պայծառ օրեր տեսնել կուզե»[2]։

Ո՛չ պատրիարքի և նրա ձայնատար պահպանողականների հարձակումները և ո՛չ էլ Բ. Դռան սպառնալիքները չէին ընկճում Սվաճյանին։ Ընդհակառակը։ Սվաճյանը շարունակում էր ավելի համարձակորեն քաղաքական պայքարի կոչել արևմտահայությանը։

«Իրավ է, մեր հայրենյաց մեծ մասին տերը օսմանյան կայսրությունն է եղած,— գրում էր «Մեղուն» 1862 թ. հունվարի 10-ին,— բայց սա չէ բուն տերը, ուստի այն չէ, որ պիտի հոգա անոր համար... Մենք է, որ մեր խելքովը, մեր բռտինքովը պիտի խլենք անոր փուշերը»[3] (ընդգծումը մերն է — Հ. Ղ.)։ Նոր տարին ավետող ծրագրային այս առաջնորդողից ակնառու է, որ Սվաճյանը պայքարի հրապարակ էր իջել մարտնչելու ոչ միայն դրսի թշնամու՝ սուլթանական կառավարության, այլ նաև ներքին դասակարգային թշնամու՝ հայ կղերի, ամիրաների, վաշխառուների, մի խոսքով, ունևոր, շահագործող վերնախավի դեմ։

«Հայրենասիրություն, հայե՛ր, հայրենասիրություն, հոգ տանինք մեր հայրենյաց, եթե կուզենք ապրիլ և մարդ ապրիլ»,— գրում էր Սվաճյանը։

«Թող կորչին այսօրվա համար ապրող հայերը, որոնք և ոչ իսկ կարող են մինչև իրենց կենաց վախճանը տեսնելու։ Մեզ հետ քաշել կուզեն մեր ճամբեն դաս մը շահասեր մարդիկ, որոնք եղբարց անկմանն ու թշվառության վրա դրած են իրենց կենաց հույսը... Ամեն ծանրություն մեր վրա դիզած թող չեն տար, որ մեր գլուխը վեր առնենք և ազիրենք դիտենք»[4]։

«Մեղուն» ակտիվորեն արձագանքեց Զեյթունի 1862 թ. ապստամբությանը։ Ապստամբության նախորդ օրը Պոլսում տեղի ունեցավ արևմտահայ «սահմանադրականների» ցույցը ուղղված պատրիարքի և ամիրայության դեմ։ Սվաճյանը ցուցարարների շարքերումն էր։ Նա մի ընդարձակ հոդվածում նկարագրեց այդ ցույցի ընթացքը, միաժամանակ մերկացրեց ցարիզմի ու սուլթանիզմի ասիմիլյատորական քաղաքականությունը։

Ռուսական «Современное слово» և անգլիական «Լեանտ Հերալդ» թերթերի թղթակիցներին պատասխանելով՝ Սվաճյանը մերկացնում էր մեծ պետությունների էքսպանսիոնիստական դիտավորությունները և հայերի ազատության միակ միջոցը համարում զինված ապստամբությունը։

«Մեկ քանի տերություններ,— գրում է «Մեղուն»,— որ իրենց մեջ բաժներ էին մեր հայրենիքը և յուրաքանչյուրը մենե մեկ մաս մը իր գերին ըրած էր,

---

[1] «Մեղուն», 1861, 30 մարտի, № 129, էջ 78։
[2] Նույն տեղում, 31 հոկտեմբերի, № 144։
[3] Նույն տեղում, 1862, 10 հունվարի, № 149 էջ 7։
[4] Նույն տեղում, 10 հունվարի, № 149, էջ 8։

գոհ չըլլալով իրենց առած բաժնինեն, կուզեին մեր հայրենիքն ամբողջ գրավել, մեզ ալ միասին և ասոնցմե վարպետը փոխանակ իր զինվորներուն և մեծամեծ գումարներուն գնովն զմեզ գնելու տեսակ-տեսակ հնարքներով կը տիրեն մեր վրա»։

«Հայը անչափ թշվառ և անչափ հուսահատ կզգա ինքնզինքը, որ իր կենաց վերջին շունչին մեջ վերակենդանության տենչանոք հանդգնությանց կդիմե, բող մոտեն վկայե 1862 թ. օգոստոսի 1-ի ըրածը... Երանի՜ թե համոզվեին ամենեքյան թե հայերը իրենց անբերելի ցավոց կատաղուբեներն կրնան տակավին ավելի հանդուգն ձեռնարկությանց դիմել, թեպետ ցավն ի խորը իրենց սրտեն (ընդգծումը մերն է — Հ. Ղ.)։ ...Մենք արթնացանք և չենք ուզեր մազ մը անգամ կորցնել ինչ որ մեր իրավունքն է, մինչև անգամ մեր այս գերության վիճակին մեջ»[1]։

Ահա այս օրերին էր, որ Հ. Սվաճյանը տպագրեց Ս. Շահազիզյանի գրչին պատկանող հետևյալ տողերը.

«Ոչ ոք չի կարող հոգուս նպատակ
Ճնշել, խորտակել բռնության զենքով.
Ոչ սուր, ոչ արյուն, ոչ բանտ, ոչ կայծակ.
Ոչ նույնիսկ գեհեն մշտավառ բոցով»[2]։

Սվաճյանը, Զեյթունի ապստամբության օրերին, հրապարակախոսության զուգընթաց, գաղտնի աշխատանք էր ծավալում պոլսահայ աշխատավորության և դեմոկրատական ինտելիգենցիայի մեջ։ Ռեակցիոն պահպանողականները, նույնիսկ լիբերալ «Մասիսի» խմբագիր Կ. Յութուճյանը, նկատելով այդ, մատնությամբ հանդես եկան։ Զեյթունի անցքերին զուգադիպող օգոստոսի 1-ի Պոլսի «սահմանադրականների» ցույցը համարվեց լրագրապետներից ոմանց բռնած անխոհեմ դրության արդյունք։ Երկու շաբաթով փակվեց «Մեղուն»։ Սվաճյանը ենթարկվեց հարցաքննության։ Օգոստոսի 31-ին Սվաճյանը գրում էր. «Լրագրույս խմբագիր — տնօրինին վերջին օրերս ունեցած արտաքո կարգի ծանր զբաղմունքեն զատ, անձնական տկարությունն ալ չընդունելով, որ օգոստոսի 10-ի և 20-ի թիվերը ի լույս ընծայէ...»[3]։

1862 թ. վերջերից Սվաճյանը հրապարակում չի երևում։ Թաքնվելով «Մեղուխեչա» կեղծանվան տակ, Սվաճյանը «Մեղվի» խմբագրությունը թողնում է Աբրահամ Մուրատյանին, այնուհետև Հովհաննես Հովյանցին, Արմենակ Հայկունուն և «անհայտանում» է։ Սվաճյանի բացակայության ժամանակ, նախկին մարտական, հրապարակախոսական հոդվածների փոխարեն, թերթը լցվում է պաշտոնական հայտարարություններով, թարգմանություններով, գեղարվեստորեն թույլ պատմվածքներով։

1863 թ. հունիսի 11-ին նորից երևում է «Մեղուխեչան»։ «Մեղվի» «Մեղուխեչայի նոր գուժեր» առաջնորդողում Սվաճյանը իր ընթերցողներին հայտնում էր. «Ասկե ելա, լեռ, ձոր անցնելով Թրակիո, Արաբիո, Միջագետքի, Փոքր Հայաստանի և Մեծն Հայաստանի ամեն սահմաններուն մեջ ի Հայկա ցրվյալ թոռներուն աղետալի և հարստահարյալ վիճակը զննելու... Մտա Հայկա սերնդյան

[1] «Մեղու», 1862, № 169, էջ 174։
[2] Նույն տեղում, № 170, էջ 179։
[3] Նույն տեղում, էջ 177։

խորը, վանքերու և եկեղեցյաց հորը, վանահարց և ազգատյաց բռնավորներու փորը, զննեցի, քննեցի, նշմարեցի և տեսա հոն ամեն չարություն, ազգատեցություն և վատթար խորհուրդներ նյութած և մթերված։ Գրեթե ամեն քաղաքներուն մեջ անգութ և հարստահարիչ իշխանները, և անխղճորեն բռնացող առաջնորդներ ու վանահայրեր։ Իշխանք՝ խեղճ ժողովուրդը կհարստահարեն, կճնշեն իսկ հարստահարյալք կաղաղակեն և կը բողոքեն, բայց լսող և օգնող չի կա»[1]։

Արտաքին և ներքին թշնամիների սոցիալական հարստահարությունները նկարագրող այս տողերի հրապարակումից հետո, «Մեղվի» էջերը լեցուն են գավառից, հատկապես՝ Մուշից, Վասպուրականից, Զեյթունից ստացված թղթակցություններով, դիմումներով։ Հավանական է, որ Սվաճյանը իր շրջագայության ժամանակ եղել էր ինչպես Արևմտյան Հայաստանի հեռավոր գավառներում, այնպես էլ Կիլիկիայի «ապստամբյալ Զեյթունում»։ Այդ շրջագայությունը հնարավորություն տվեց հրապարակախոսին ավելի մանրամասն ծանոթանալ գավառահայության սոցիալ-քաղաքական դրության հետ։ Սվաճյանը այժմ պայքարում էր երկու թշնամիների՝ սուլթանական կառավարության և հայ վերնախավի դեմ։ Նա ձգտում էր ազգային-քաղաքական պայքարի միջոցով լուծել նաև արևմտահայության սոցիալական ազատագրության խնդիրը։

1863 թվականից «Մեղվի» խմբագիրը, արևմտահայ գավառի թղթակիցների դիմառնությամբ, հրապարակում էր մի շարք մարտական՝ լիբերալների և պատրիարքարանի, իշխանների ու վանականների գործունեությունը խարազանող հոդվածներ։ Սվաճյանը ձգտում էր ժողովրդին բացահայտել, որ «օտար», հատկապես մեծ պետությունները երբեք հայերին ազատել չեն ուզում, նրանց ազատագրման «փրկարար» միջոցը զինված ապստամբությունն է։ Հայերի ազատագրման, հատկապես զինված պայքարի մեթոդներով մաքառելուն դեմ էին պատրիարքը, ամիրաները, ազգային խառը ժողովի լիբերալ դեպուտատները։

«Ունիա ինքնին կարողացավ յուր ընտանեկան իրավունքը պաշտպանել, բայց չկրցավ պոլսեցվոց անտարբերությանը դիմանալ,— գրում է «Մեղուն»,— կարողացավ յուր իրավունքը օսմանյան կառավարության իմացնել և պաշտպանելու խոսքն առնուլ, բայց չկրցավ պատրիարքարանի գութը շարժել, չկրցավ ազգային խառր ժողովի խոսիլը՝ գործելուն դարձնել... Ունիո անցքին քննությանը համար Բ. Դռան և պապականաց կողմեն տրվելիք տեսուչներն անմիջապես ընտրվեցան, բայց հայոց կողմեն տեսչության պաշտոնը վարելու անձին անձնական վրաղմունքն ազգային իրավունքն կասեցուց և մինչև անգամ հայքը տեսուչ մը ընտրելու անկարող ճանչվեցան աշխարհի առջև, և **վերջապես ոչնչացիր ալ օր մը ճուաճատուրենն պիտի ստիպվին ազատարար միջոցի մը դիմելու ուրիշներու նման**»[2] (ընդգծումը մերն է — Հ. Ղ.)։

Այս կոչը, կամ ապստամբվելու սպառնալիքը ուղղված էր ոչ միայն սուլթանական կառավարության, այլ նաև Սահմանադրական վարչության լիբերալ դեպուտատների դեմ։

1863 թ. ենթադրաբար Սվաճյանը, լինելով Զեյթունում, վերադարձին սկսեց տպագրել ամերիկյան միսիոներների՝ բողոքականների, ինչպես նաև Նապոլեոն III-ի կաթոլիկ «ագենտների» դավանափոխական գործունեությունը մերկացնող

---

[1] «Մեղու», 1863, 11 հունիսի, № 203, էջ 161—162։

[2] Նույն տեղում, № 220, էջ 296։

մի շարք հոդվածներ։ Սվաճյանը բազմաթիվ փաստերով ցույց էր տալիս, թե ինչպես Նապոլեոն III-ի գործակալները «ազատարարների» ու «լուսավորիչների» դիմառնությամբ Կիլիկիայում նախապատրաստական աշխատանք են ծավալում ֆրանսիական կառավարության ծրագրած քաղաքական էքսպանսիայի համար։ «Մեղուն» ջանքեր էր թափում արևմտահայության ուշադրությունը հեռու պահելու Եվրոպական դիվանագետների գծած «ազատագրման» ուղուց և ձգտում էր կազմակերպել ներքին և արտաքին թշնամիների դեմ ուղղված ապստամբական շարժումներ։

Նալբանդյանի բանտարկությունը, սուլթանական ռեակցիայի նոր հարձակումները երբեք էլ չթուլացրեցին արևմտահայ դեմոկրատական ինտելիգենցիայի, առավել ևս նրա առաջատար պարբերականի խմբագրի՝ Հ. Սվաճյանի պրակտիկ և հրապարակախոսական գործունեությունը։ 1864 թ. հունվարի 18-ին «Մեղվի» առաջնորդողում նորից զինված ապստամբության մարտակոչ էր նետվում արևմտահայությանը։

«Այո, մարդկային ազգի հառաջադիմության իրական թագավորը,— գրում էր «Մեղուն»,— արդարությունը, որ փորձով տեսնված է, թե առանց արյունահեղության չը պիտի կրնա տիրել երկրագունդիս, մեծ հաղթանակ մը պիտի կանգնե այս թվականիս մեջ, որուն շնորհիվ ոչ միայն պիտի հրիվին անրիվ տառապյալներ, այլ և երկրորդ և երրորդ մեծազույն հաղթանակներու ալ դուռ պիտի բացվի, այլ և շատ թշնամիներ ինքնին անձնատուր պիտի ըլլան այս նոր արքային, որուն բազավորության գալիքը թվականես... առաջ քարոզվեցավ»[1] (ընդգծումը մերն է—Հ. Ղ.)։

Նոր տարին ավետող նույն առաջնորդողում «Մեղուն» կանխատեսում էր Եվրոպայում հասունացող ռևոլյուցիոն սիտուացիան։ «Եվրոպայի մեծագույն տերությունները կշարժին,— գրում էր նա,— փոքրագույնները կխռովին, քաղաքակրթությունը ազատության էլեկտրիկը կը զարնե, բռնակալությունը կահարեկի. ժողովրդոց իրավունքը հաստատության վճիռ ալ կընդունի՝ հակառակ ինքնակալներու ահավոր և մարդախոշոր բանակներուն. ազգաց և ընդհանուր մարդկության բարերար դյուցազունքը այս անգամ ավելի մեծ արիությամբ կը նետվին հասպարեզ. սուրբ կսրվին ամեն կողմ, բնդանորներ կը լեցվին. նավատորմիղներ կը պատրաստվին, բանակներ պատերազմի վիճակի մեջ կդրվին»[2]։

Այս ռևոլյուցիոն իրադությունը «կանխահաս» ռևոլյուցիայի կվերածվի, որն ալեկոծելով ողջ «Եվրոպա անպատճառ կերպարանափոխ պիտի ըլլա և անոր հավասարակշռության բասերուն մեջեն բան պիտի հանվի դրվի, բան պիտի պակսի եվելնա. մինչև ցարդ արժեք չունեցած երեցողները արժեքնին պիտի զտնեն. ծանր կշռվողները պիտի թեթևնան և նոր հավասարություն մը պիտի հաստատվի...»[3]։

«Մեղվի» այս առաջնորդողից ակնհայտ է, որ մեղվական երիտասարդությունը ձգտում էր «առաջին հաղթանակով» ազատվել սուլթանական Թուրքիայի տիրապետությունից, իսկ «երկրորդ» և «երրորդ» հաղթանակներով դատաստան տեսնել ներքին, դասակարգային թշնամու հետ։

---

[1] «Մեղուն», 1864, 18 հունվարի, № 227, էջ 3։
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում։

Այսպիսով, 50-ական թվականներին հայ ժողովրդի կրթության և լուսավորության ծրագրերով գործող Սվաճյանը 60-ական թվականներին առաջադրեց նրա քաղաքական ու սոցիալական ազատագրության պահանջները։

Մ. Նալբանդյանի և նրա միջոցով նաև եվրոպական ռևոլյուցիոն ազատագրական շարժման ղեկավարներից ոմանց հետ ունեցած հնարավոր կապերը և գաղափարական ազդեցությունները, զուգակցվելով ժողովրդական մասսաների՝ ներքևից եկող ազատագրական շարժումներից ստացած տպավորությունների հետ, Հ. Սվաճյանին դուրս բերեցին ազգային-դեմոկրատական ուղուց և նրա պրակտիկ գործունեությանը, որոշ դեպքում և «Մեղվի» հրապարակախոսությանը հաղորդեցին ռևոլյուցիոն-դեմոկրատական թափ։

1862 թ. սկսած, սուլթանական Թուրքիայի դարավոր տիրապետության դեմ քարոզվող զինված ապստամբությունները Սվաճյանի ծրագրերում արդեն պայքարի միջոց էին թուրքական ֆեոդալիզմը տապալելու, քուրդ ցեղապետների ու հայ հարուստ վերնախավի, աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների ճանկերից աշխատավոր գավառահայությունը ազատագրելու համար։ «Մեղվի» էջերը լցվում են գավառի շարքաշ գյուղացու սոցիալական դրությունը նկարագրող հոդվածներով, գավառահայ և քաղաքի «օրավարձու մշակներին», արհեստավորներին ուղղված սոցիալ-դասակարգային պայքարի բազմաթիվ կոչերով։ Ազգային հարցի կողքին Սվաճյանի հրապարակախոսության մեջ տեղ է գրավում և աստիճանաբար հիմնականը դառնում ագրարային հարցը։

Քիչ էական չէ և այն, որ Նալբանդյանի բանտարկությունից, ապա և նրա մահվանից հետո արևմտահայության ազատագրման ծրագրերի իրականացման համար մղվող պայքարի գործը շարունակում է Հ. Սվաճյանը՝ զինակիցներ ունենալով Ս. Թագավորյանին, Գր. Չիլինկիրյանին, Կ. Փանոսյանին և ուրիշներին։ Նա կատաղի մարտեր էր մղում Նալբանդյանի արևելահայ և արևմտահայ հակառակորդների դեմ, խարազանում Այվազովսկի-Զամուռճյան կուսակցության ժողովրդադավ գործերը։ Պատահական չէ, որ հայ ռեակցիոն պահպանողականների դեմ ուղղված Մ. Նալբանդյանի «Կտոր մը այվազովսկիաբանություն» պամֆլետը Պետրոպավլովյան բերդից դուրս է գալիս և առաքվում Հ. Սվաճյանին, տպագրվում «Մեղու» երկշաբաթաթերթում։ «Ազգային թշվառություն» հոդվածը, «Ուղերձ առ Մեչուխեչա» բանաստեղծությունը այլևս կասկած չեն թողնում այն սրտառուչ մտերմությանը, որը շարունակում էր հարատևել Նալբանդյանի և Սվաճյանի մեջ նաև բանտարկության տարիներին։

60-ական թվականներից սկսած մինչև 1874 թ., այսինքն մինչև իր մահը, Հ. Սվաճյանը աներեր կերպով կանգնած մնաց «Նալբանդյանական» դիրքերում։ Խորին գաղտնության մեջ մնացող նրա պրակտիկ գործունեությունը ունեցավ ռևոլյուցիոն բովանդակություն, սակայն հրապարակախոսության ասպարեզում Սվաճյանը չկարողացավ բարձրանալ Նալբանդյանի աստիճանին։ Ազգային-քաղաքական պայքարի գաղափարախոսության խնդրում Սվաճյանը մնաց բուրժուա-դեմոկրատական դիրքերում, որոշ առիթներով արտահայտելով ռևոլյուցիոն-դեմոկրատական մտքեր ու տեսակետներ։